2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԻՈՒԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ՀԱՅԱՑՔ ՆԵՐՍԻՑ 3

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ՈՒ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ՝ ԱՐՏԱՔԻՆ ԱՉՔՈՎ 8

ՆՈՐ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ 13

ՏԵԽՆԻԿԱՆ՝ ՖՈԿՈՒՍԻ ՏԱԿ 16

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ՝ ԱՆՎՏԱՆԳ ՀԱՅԱՑՔ 21

ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ՝ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ 24

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ 27

ԱՐԽԻՎԸ՝ ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻ ՏԱԿ 30

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ 33

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ՝

ՀԱՅԱՑՔ ՆԵՐՍԻՑ

60-ՐԴ ԵԹԵՐԱՇՐՋԱՆԸ՝ ՀԴ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՄԲ

ԵԹԵՐՈՒՄ

Արդեն վեց տասնամյակ Հայաստանի մայր հեռուստաընկերությունը հեռուստադիտողի հավատարիմ ուղեկիցն է, հայաստանյան և միջազգային վարգացումների վկան ու արձանագրողը: Այս տարիներին, լինելով Խորհրդային Հայաստանի, այնուհետև՝ անկախացող և ապա՝ Հայաստանի երրորդ Հանրապետության հանրային հեռարձակողը և ներկայացնելով պատմության տարբեր շրջափուլերի իրադարձությունները՝ Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը մշտապես մեծ պատասխանատվությամբ է վերաբերվել սեփական հեռուստաարտադրանքի որակին, ժամանակի հրամայականով պայմանավորված բովանդակության ստեղծմանն ու աշխարհասփյուռ հայությանը հայրենիքի հետ մշակութային ու հոգևոր թելերով կապելու իր առաքելությանը:

Հեռահաղորդակցության ոլորտի անընդհատ վարգացող մարտահրավերներին ընդառաջ՝ հեռուստաընկերությունը պարբերաբար փոփոխվել է՝ հատելով հեռարձակման անալոգային, թվային, արբանյակային, ինտերնետային ձևաչափերը, և այժմ էլ, որպես երրորդ հավարամյակի հեռուստատեսություն, հասանելի է բջջային հավելվածների միջոցով:

Ամենահավակնոտ հեռուստադիտողի ակնկալիքներն ու պահանջմունքը բավարարելու համար հեռուստաընկերությունը 2016 թվականին ևս շարունակել է դիտարժան հեռուստանախագծեր մատուցելու իր առաքելությունը՝ հեռուստահաղորդումների արտադրություն, հաղորդումների, ֆիլմերի, սպորտային և մշակութային առավել կարևոր միջոցառումների հեռարձակում, ֆիլմերի կրկնօրինակում: Բազմաժանր հեռուստանախագծերի արտադրությունն ապահովելու համար շոշափելի քայլեր են ձեռնարկվել տեխնիկական վերազինման ուղղությամբ:

Հանրային հեռուստաընկերության հաղորդումները հեռարձակվում են ԱՊՀ տարածքում, ԱՄՆ-ում, Կանադայում, Ավստրալիայում, Եվրոպայի, Միջին և Հեռավոր Արևելքի, Հյուսիսային Աֆրիկայի մի շարք երկրներում:

EBU

Հանրային հեռուստաընկերությունը Եվրոպական հեռարձակողների միության (EBU) անդամ է և ընդառաջ է գնում ժամանակակից մարտահրավերներին՝ ապահովելով միության բոլոր պահանջները: Անդամակցության շրջանակներում միությունն իր հերթին Հանրային հեռուստաընկերությանը անհատույց տրամադրել է հեռուստատեսային տեխնիկա, մարզական և մշակութային կարևորագույն իրադարձությունները ցուցադրելու բացառիկ իրավունք (ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն, Նոբելյան մրցանակաբաշխություն և այլն):

ՏԵԽՆԻԿԱ

Հանրային հեռուստաընկերությունը նույն այդ ժամանակահատվածում ձեռք բերեց ժամանակակից տեխնիկական սարքավորումներ և արտադրատնտեսական գույք, հեռուստատեսային տեխնիկայի ծրագրային լիցենզիաներ, ինտերնետային կայքի տեխնիկական արդիականացման ծառայություններ և այլն:

ԱՐԽԻՎ

Հայաստանի մշակութային, քաղաքական ու տնտեսական կյանքի կարևորագույն իրադարձությունները տարիների ընթացքում հավաքվել են տարատեսակ կրիչների՝ կինոժապավենների, տեսաերիզների, կոշտ սկավառակների վրա: Դրանք ժամանակի ընթացքում կկորցնեին իրենց որակն ու պիտանելիությունը, եթե չնախաձեռնվեր հսկայական ծավալի նյութերի արխիվացումը: 2016թ. կատարվեցին ավելի քան 200 ժամ տևողությամբ արխիվային նյութերի քիմիական մշակման աշխատանքներ:

HD

2016թ. սեպտեմբերին մեկնարկեց հեռուստաընկերության 60-րդ եթերաշրջանը, և նույն օրն էլ՝ սեպտեմբերի 13-ին, անցում կատարվեց բարձր հստակության (HD որակի) հեռարձակման՝ ինչպես մետրային, այնպես էլ արբանյակային հաճախականությունների համար:

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
ՈՒ ՆՈՐ ԾՐԱԳՐԵՐ՝

ԱՐՏԱՔԻՆ ԱՉՔՈՎ

8766x2 ժամ հաղորդում

Որպես հանրային հեռուստաընկերություն՝ Առաջին ալիքն ապահովում է այնպիսի եթերացանց, որն իր դաստիարակչական, ճանաչողական և կրթական հիմնական առաքելությանը կուգահեռ ձգտում է հետաքրքրական լինել հանրության տարբեր շերտերի համար:

Հանրայինի կողմից առաջարկվող հաղորդումների թեմատիկ բազմազանությունն այսօր հեռուստադիտողին հնարավորություն է տալիս գտնելու իր նախասիրություններին առավելագույնս համապատասխանող հեռուստաեթեր:

2016թ. Հայաստանի Հանրապետությունում և երկրի սահմաններից դուրս Առաջին ալիքի եթերում հեռարձակվել են 8766-ական ժամ հեռուստահաղորդումներ՝ համաձայն ստորև բերված աղյուսակում նշված թեմատիկ ուղղությունների և ծավալների:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

2016
ԹՎԱԿԱՆԻՆ
ՀԱՆՐԱՅԻՆ
ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ
ՀԵՌԱՐՁԱԿՎԱԾ
ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ
ԾԱՎԱԼՆԵՐԸ՝
ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԹԵՄԱՏԻԿ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԵՌԱՐՁԱԿՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌՆԵՐԸ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ԳԾԱՊԱՏԿԵՐ 1-ՈՒՄ ԵՎ ԳԾԱՊԱՏԿԵՐ 2-ՈՒՄ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ **ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔՈՎ** ՀԵՌԱՐՁԱԿՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ (%)



- ԶՎԱՐՃԱԼԻ-ԺԱՄԱՆՑԱՅԻՆ
- ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ
- ԳԻՏԱԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ, ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
- ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
- ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
- ԼՐԱՏՎԱԿԱՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
- ՀՈԼՈՎԱԿՆԵՐ, ԱՅԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

2016 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԼԻՔՈՎ** ՀԵՌԱՐՁԱԿՎԱԾ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ (%)



- ԶՎԱՐՃԱԼԻ-ԺԱՄԱՆՑԱՅԻՆ
- ԵՐԱԺՇՏԱԿԱՆ
- ՄԱՐԶԱԿԱՆ
- ԳԻՏԱԼՈՒՍԱՎՈՐՉԱԿԱՆ, ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
- ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
- ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
- ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
- ԼՐԱՏՎԱԿԱՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
- ՀՈԼՈՎԱԿՆԵՐ, ԱՅԼ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ



2016 Թ. ՆՈՐ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԳԻՏԵԼԻՔ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1

Հաղորդաշարը հայկական ամենամեծ ձեռագրապահոցի՝ Մատենադարանի հնագույն մատյանների մասին է: Յուրաքանչյուր ֆիլմում ներկայացվում է մի ձեռագիր՝ նրա ստեղծման և իր ժամանակաշրջանում ունեցած դերի պատմությունը: Հաղորդումը ճանաչողական է՝ նախատեսված լայն լսարանի համար:

Ֆիլմաշարը ՀՀ Զինված ուժերի մարտունակության, տեխնիկական ու ֆիզիկական ներուժի մասին է: Ավիացիայի, վրահատանկային ուժերի և հատուկ նշանակության ջոկատների ամենօրյա գործողությունների մասին պատմում են իրենք՝ վինվորականները՝ շարքայինից մինչև հրամանատար: Բանակային կյանքը՝ վորակոչիկների համար՝ բոլոր մանրամասներով:

Եթե բոլորը համախմբվեն, օգնության ձեռք մեկնեն՝ կարելի է փրկել երեխայի կյանքը, փոխել կյանքի որակը: Այս հեռուստանախագիծը հանուն իրենց առող-ջության ու կյանքի պայքարող երեխաների մասին է և այն մարդկանց համար, ովքեր պատրաստ են օգնության ձեռք մեկնել ու ցույց տալ խնդիր ունեցող երեխայի ընտանիքին ապրելու ճանապարհը:

Համաշխարհային սպորտում հայկական եռագույնի պատիվը բարձր պահած, հաղթանակ կերտող մարվիկների մասին ֆիլմաշարը պատմում է նրանց կյանքի, չեմպիոնի տիտղոսին հասնելու ճանապարհի՝ անդադար մարվումների, ուժեղ մրցակիցների և հիասթափությունները հաղթահարելու մասին:

«Արքիմեդիա»-ն ֆիզիկայի մասին ուսուցողական, ժամանցային հեռուստանախագիծ է: Բարդ թվացող այս գիտությունը մատուցվում է պարզ ու մատչելի՝ պրակտիկ փորձերով և վվարձալի լուծումներով: Ճանաչողական և տեղեկատվական հաղորդումը նախատեսված է դպրոցականների համար, սակայն գրավիչ է նաև մեծահասակների համար:

Հաղորդաշարը մայրաքաղաքի պատմության և այդ պատմությունը գրողների մասին է: Հյուրասրահում են քաղաքին ու Հայաստանին գույն տվող մարդիկ, նրանք վերհիշում են մայրաքաղաքի պատմության ամենավառ էջերն ու հեռուստադիտողին տանում հին Երևանի գիրկը:

Հոգեբանական նովելների հիմքում իրական պատմություններ են, որոնք վերլուծության և հանգուցալուծման կարիք ունեն: Ամեն ֆիլմում ներկայացվում է մի դրվագ՝ հեռուստադիտողին հնարավորություն տալով կողքից նայելու սեփական կյանքին, վերարժևորելու և գնահատելու կյանքում հանդիպող բարդ իրավիճակները և, լսելով հոգեբանին, գտնելու դրանց լուծումները:

Բալմասերիանոց դետեկտիվ հեռուստաֆիլմ, որի հերոսները ոստիկանության օպերատիվ-քրեագիտական հատուկ բաժնի աշխատակիցներն են: Նրանք քննում ու բացահայտում են առավել բարդ և հասարակական հնչեղություն ունեցող հանցագործությունները: Նորագույն տեխնիկական և լաբորատոր սարքավորումներով բաժինը կատարում է ցանկացած քրեագիտական հետաքննություն:

Զրույցներ սիրված ու ճանաչված մարդկանց հետ՝ մտերմիկ մթնոլորտում: Հայտնի մարդիկ պատրաստ են խոսել իրենց կյանքի անհայտ ու գաղտնի պատմությունների մասին, անկեղծանալ, վերապրել երբեմնի երջանիկ ու տխուր պահերը:

Երաժշտական մրցութային այս շոուն արտիստների համար ճանապարհ էր դեպի «Եվրատեսիլ»: Նախագծի մասնակիցներին ամբողջ ընթացքում ուղղորդեցին «Եվրատեսիլ»-ի նախորդ տարիների հայաստանյան մասնակիցները, ովքեր անցել էին այդ ճանապարհը և գիտեին հաջողության հասնելու բանաձևը:

Հաղորդաշարը ներկայացնում է Հայաստանում ամենահայտնի կատարողներին, նրանց ստեղծագործական ճանապարհն ու հետաքրքիր դրվագներ կյանքից: Բացահայտվում են գաղտնիքներ, ու մատուցվում անակնկալներ: Հեռուստաշոուն ամբողջանում է նրանց երգացանկի այն երգերով, որոնցով դարձել են հայտնի ու սիրելի:

Նախագծի նպատակն է բացահայտել նոր անուններ: Հեռուստատեսային հարթակում մրցում են ակումբային երգիչները: «Ամենակարող երգիչը» հնարավորություն է տալիս արտիստներին իրենց ուժերը փորձելու տարբեր ժանրերում և թեմատիկ երգերում՝ ժողովրդականից մինչև դասական:

Խոհանոցը ոչ միշտ է խառնաշփոթ կենցաղային վայր: Այն մեր առօրյայի կարևոր մասն է և շատ հաճախ մեզ տանում է համի ու բույրի անվերջ հետաքրքիր ճանապարհով: Այն կարող է լինել հեռավոր, անհայտ կամ չափազանց կարճ ու ծանոթ, բայց միշտ անկրկնելի ու ոգևորիչ՝ ինչպես ցանկացած ուտեստ: Խոհարարական գիտելիքներին գումարելով երևակայությունն ու լավ տրամադրությունը՝ հնարավոր է ամեն օր ստեղծել փոքրիկ գլուխգործոցներ:

ՏԵԽՆԻԿԱՆ՝ ՖՈԿՈՒՍԻ ՏԱԿ

HD հեռուստաալիք

Ժամանակակից պահանջներին համապատասխանող հեռուստաընկերություն ունենալու, ստեղծագործական լուծումներն ու հետաքրքիր գաղափարները հեռուստադիտողին որակով մատուցելու համար անհրաժեշտ է համապատասխան տեխնիկական հագեցածություն: Հեռուստաեթերի բովանդակային վարգացումներին զուգընթաց՝ հեռուստատեսային տեխնիկայի սերնդափոխությունն ու տեխնիկական վերակինման շարունակականությունը օբյեկտիվ պահանջ է, ուստիև Հանրային հեռուստաընկերությունն այս ուղղությամբ 2016թ. նախաձեռնել և իրականացրել է մի շարք հանգուցային միջոցառումներ:

• Հեռուստաընկերություններն իրենց համակարգերի ենթակառուցվածքների հիմքում օգտագործում են օպտիկամանրաթելային մալուխներ, քանի որ դրանք կայուն են աղմուկների նկատմամբ և հնարավորություն են ընձեռում առանց ուժեղարարների կիրառման ու առանց կորստի հեռու տարածությունների վրա հաղորդել հեռուստաազդանշանները (նաև՝ HD որակի): Հաշվի առնելով այս հանգամանքը՝ կատարվել է Հանրային հեռուստաընկերության արտաքին կապուղիների փոխարինումը օպտիկամանրաթելային մալուխներով և համալրող պարագաներով, մասնավորապես՝ ՀՀՌՑ-ի մասնաշենքից մինչև Հանրային հեռուստաընկերության մասնաշենք, արբանյակային կայանից մինչև նոր եթերային սարքասրահ, Առաջին լրատվականից մինչև նոր եթերային սարքասրահ:

Կայունություն, մեծ պատասխանատվություն

• «Հեռահաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջով Հանրային հեռուստաալիքով հեռարձակվող օտարալեզու ֆիլմերը թարգմանվում են հայերեն: Ժամանակին Հանրային հեռուստաընկերությունն առաջին քայլն է կատարել այս ասպարեզում՝ կինոֆիլմերի կրկնօրինակման համար ստեղծելով հատուկ հնչյունային սարքասրահ: 2016թ սարքասրահը արդի տեխնիկական պահանջներին համապատասխանեցնելու համար վերապինվել է համակարգչային և հնչյունային սարքավորումներով և հարակից պարագաներով:

• Առաջին ալիքի Լրատվական ծառայության տեխնիկական վերապինումը, նորագույն տեխնիկայի և առաջավոր տեխնոլոգիաների ներդրումը ժամանակի հրամայականն է: 2016թ տեխնիկական համալրումն իր մեջ ներառել է ժամանակակից «Sony» տեսախցիկների 6 լրակազմ՝ իրենց կայաններով, դյուրակիր համակարգիչներով, նյութերը ստուդիա հաղորդելու և մոնտաժի հնարավորությամբ, ինչը հանգեցրել է լրատվության ստացման օպերատիվության, մեծ շարժունակության և ավտոնոմ աշխատանքի հնարավորության: Թղթակցական կետերը ևս համալրվել են ժամանակակից տեխնիկայով:

Խորագրային տեխնիկա

• Հեռուստատեսության արբանյակային ալիքի հեռարձակման հետ կապված ծախսերը կրճատելու նպատակով ավդանշանի հաղորդման եղանակը արբանյակայինից փոխվել է ինտերնետայինի:

• Ներկայումս լուսադիոդային (LED) էկրանների կիրառումը հեռուստատեսությունում թույլ է տալիս ստեղծել բացառիկ դիվայն հեռուստատաղավարների համար՝ գրաֆիկական և տեսատեղեկատվության դինամիկ արտացոլումը դարձնելով առավել արդյունավետ ու որակյալ: Այս նկատառումներից ելնելով՝ 2016թ. Հանրային հեռուստաընկերությունը ձեռք է բերել 50մ^2 ընդհանուր մակերեսով LED էկրաններ:

10 HD տեսախցիկ

• Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության միջև 2014թ. դեկտեմբերի 23-ին կնքված առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրի և 2015թ. փետրվարի 3-ին երկու երկրների կառավարությունների միջև պայմանավորվածության մասին փոխանակման նամակների՝ «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության տեխնիկական վերակիսման ծրագրի շրջանակում Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը ստացել է շարժական արբանյակային կայան և նոր շարժական հեռուստակայան՝ 10 HD տեսախցիկներով: Նույն՝ տեխնիկական վերակիսման ծրագրի շրջանակում 2016թ. ավարտին են հասցվել եթերային և կենտրոնական սարքասրահների տեղադրման ու գործարկման աշխատանքները: Նոր սարքասրահների գործարկմամբ հեռուստատեսության SD հեռարձակումը փոխարինվեց HD-ով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ՝

ԱՆՎՏԱՆԳ ՀԱՅԱՑՔ

Նոր սերնդի էլեկտրոնային համակարգեր

Այսօր տեղեկատվության և հաղորդակցման նոր տեխնոլոգիաները դինամիկ փոփոխությունների իրականացման անհրաժեշտ բաղադրիչն ու շարժիչն են: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի շարունակական նորարարությունները նոր մոտեցումներ են պարտադրում ժամանակակից հեռուստատեսությանը:

2016թ. նախագծվել են Հանրային հեռուստաընկերության ՏՏ ենթակառուցվածքների փոփոխման և զարգացման հիմնական ուղիները՝ նոր տեխնոլոգիաների կիրառման ու տեղեկատվական անվտանգության անհրաժեշտ ապահովման նկատառումներով: Հիմնանորոգմանը զուգընթաց՝ հիմնովին փոխարինվել են գլխավոր մասնաշենքի ցանցային լարանցումները: Մոնտաժվել են նոր օպտիկամանրաթելային մալուխներ՝ գլխավոր մասնաշենքի ներսում և մասնաշենքերի միջև (Լրատվական ծառայություն, Տաղավար-6, ՇՀԿ) բարձր արագության կապ ապահովելու համար: Տեղադրվել են նոր սերնդի՝ ավելի բարձր թողունակությամբ ցանցային կոմուտատորներ, որոնք ապահովում են 10 ԳԲ/վ արագություն, ինչը շուրջ 10 անգամ բարձր է նախկինում եղածից:

10 գբ/վ արագություն

Տեղադրվել է L3 կառավարող կենտրոնական ցանցային կոմուտատոր, որը կարգավորում է հեռուստաընկերության ամբողջ ցանցային համակարգը: Հիմնովին վերադասավորվել և փոխվել է սերվերային սենյակը, կարգավորվել են լարանցումները, տեղադրվել են սերվերային պահարաններ և նոր հովացման համակարգ:

2016թ Հանրային հեռուստաընկերությունում տեղադրվել են մի շարք էլեկտրոնային համակարգեր՝ կենտրոնական կառավարման (domain controller), էլեկտրոնային նամակագրության (exchange server), ներքին հաղորդակցության (skype for business), ֆայլերի պահպանման և շրջանառության (file server), սերվերային և ցանցային ենթակառուցվածքների մշտադիտարկման (monitoring system), սերվերային ենթակառուցվածքների տվյալների ավտոմատ պահուստային կրկնօրինակման, սերվերների և համակարգիչների ավտոմատ ու կենտրոնացված թարմացման (WSUS), հեռուստաընկերությունից դուրս ֆայլերի փոխանակման (FTP server), եթերի առցանց հասանելիությունն ապահովող համակարգեր:

ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ. ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Լրատվական թղթակցական կետերի աշխատանք

Զանգվածային լրատվամիջոցների, հատկապես՝ Հանրային հեռուստաընկերության առանցքը լրատվական ծառայությունն է, որի միջոցով ամենօրյա անմիջական կապ է ապահովվում ԶԼՄ-ի և լսարանի միջև:

Հանրային հեռուստաընկերության Լրատվական ծառայության 2016թ. կարևոր ձեռքբերումներից է թղթակցական կետերի աշխարհագրության ընդլայնումը: 2015թ. ձևավորված լրագրողական թիմերը կայացել են, և 2016թ. Փարիզում ու Մոսկվայում հաստատվել են մշտական թղթակցական կետեր: Նոր, արդյունավետ գործող թղթակցական կետ է բացվել Սիրիայի Հալեպ քաղաքում: Տարեվերջից ավելի ակտիվ գործակցություն է ծավալվել արտերկրում գործող ՀՀ դեսպանատների հետ: ՀՀ մարզերից 4-ում՝ Շիրակում, Արմավիրում, Լոռիում, Տավուշում, ստեղծվել են թղթակցական կետեր՝ նախկինում գործող թղթակիցների հետ պայմանագրերի ձևաչափի թարմացմամբ:

Ինստիտուտներ, ինստիտուտներ

Արմատական փոփոխություններ են կատարվել լրատվության ձևավորման ու մատուցման քաղաքականության մեջ: Տարեվերջից նախադրյալներ են ստեղծվել՝ լրատվական թողարկումներն ավելի դինամիկ ու դիտարժան դարձնելու համար: 2016թ. փոխվել ու թարմացվել են լրատվական ծառայության տաղավարները, համալրվել են տեխնիկական միջոցները:

ՏԼՏԵՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏ

Տեխնոլոգիական, արտադրական

Ֆունկցիոնալ, տեխնիկապես ապահովված աշխատավայրը, անհրաժեշտ կահավորվանքով հագեցած քննարկումների սրահներն ու գրասենյակները ժամանակի հրամայականն են: 2016թ. կարևորվել է Հանրային հեռուստաընկերության արդյունավետ աշխատապայմանների՝ շենքային և գույքային պայմանների բարելավման անհրաժեշտությունը: Գնահատվել են շինությունների վթարայնության, մաշվածության աստիճանները, սեյսմիկ անվտանգությունը, և ըստ արդյունքների՝ կազմվել է ծրագիր՝ շենք/շինությունների ապամոնտաժման, հիմնանորոգման, հիմքերի ամրացման, տանիքների վերանորոգման աշխատանքներ իրականացնելու նպատակով:

GPS համակարգեր

Կատարվել են ընկերության գլխավոր մասնաշենքի արտաքին սանդուղքների կապիտալ վերակառուցման աշխատանքներ: Վերանորոգվել է հսկիչ անցագրային կետը, հիմնանորոգվել են գլխավոր մասնաշենքի նկուղային հարկի, 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարկերի անհրաժեշտ հատվածները: Վերակառուցվել է գլխավոր մասնաշենքի տանիքը, փոխարինվել են գլխավոր մասնաշենքի ճակատային մասի պատուհանները, վերանորոգվել է ներքին օղակաձև ջրագիծը: Տեղադրվել է արտաքին գեղարվեստական լուսավորություն:

Իրականացվել են «Երևան ստուդիա» մասնաշենքի վթարային հատվածի քանդման, կից եռահարկ աստիճանավանդակի կառուցման, ընթացիկ վերանորոգման աշխատանքներ:

Վերանորոգված հատվածներն ապահովվել են կահավորանքով, օդորակիչներով, աշխատասենյակները՝ վարագույրներով և շերտավարագույրներով:

Իրականացվել է ընկերությանը պատկանող և չշահագործվող ավտոտրանսպորտային միջոցների օտարում՝ աճուրդային եղանակով:

ԱՐԽԻՎԸ՝ ՄԱՆՐԱԴԻՏԱԿԻ ՏԱԿ

Մեկ միասնական թվային արխիվ

Հանրային հեռուստաընկերության արխիվը ազգային հարստություն է, պետական արխիվի կարևոր բաղկացուցիչը: Տարատեսակ կրիչների թվայնացումը մեկ միասնական արխիվի շրջանակում ժամանակի պահանջն է, ինչն էլ հեռուստաընկերությանը հնարավորություն է տալիս լայնորեն օգտագործելու պահոցի հարստությունը: Հանրային հեռուստաընկերության հիմնախնդիրներից է արխիվի պահպանումը, թվայնացումն ու հասանելիությունը:

2016թ. կատարվել են ավելի քան 200 ժամ տևողությամբ արխիվային նյութերի քիմիական մշակման՝ լվացման, մաքրման, փայլապատման ու խոնավացման աշխատանքներ: Մշակված նյութերի վգալի մասը թվայնացվել է: Թվային արխիվին տրամադրվել է մեծ սերվերային տարածք, որի շնորհիվ բարձր որակով է ապահովվում հեռուստաեթերը:

հասանելի արխիվային նյութեր

2016թ. իրականացվել են երկհարկանի ժամանակակից լաբորատորիայի կառուցման նախապատրաստական աշխատանքները, որոնց ավարտին հեռուստաընկերությունն ունենալու է բոլոր անհրաժեշտ պայմաններով ապահովված լաբորատորիա, պահեստներ և աշխատասենյակներ:

Հայաստանի հանրային հեռուստաընկերության արխիվային նյութերն ապագայում հասանելի կլինեն հանրության լայն շերտերին՝ շնորհիվ Ճապոնիայի կառավարության կողմից Հայաստանին տրամադրվելիք դրամաշնորհի: Ճապոնական JICA պետական գործակալության հետ իրականացվող համագործակցության արդյունքում Հայաստանի հանրային հեռուստատեսության արխիվը կհամալրվի թվայնացման համար անհրաժեշտ սարքավորումներով: Տեխնիկական վերապինումը հնարավորություն կտա ոչ միայն թվայնացնելու արխիվային նյութերը, այլև պատկերի մասնագիտական մշակում իրականացնելու, մոնտաժելու, նաև էլեկտրոնային ֆիլմադարան ստեղծելու՝ արխիվի բավմաշերտ որոնման հնարավորությամբ:

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ

Տնտեսական գործունեության տարեկան հաշվետվություն

2016թ. Հանրային հեռուստաընկերությունն իր գործունեությունն իրականացրել է ՀՀ պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, միջազգային ալիքի առևտրային և Առաջին ալիքի սոցիալական գովազդից, մշակութային, ուսումնական, գիտակրթական և սպորտային հեռուստահաղորդումների ցուցադրման հովանավորությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման, ինչպես նաև տեխնիկական վերակինման և շենք-շինությունների հիմնանորոգման աշխատանքների ֆինանսավորման նպատակով «ՀՀ 2016թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Հանրային հեռուստաընկերությանը հատկացվել է՝

• 08.03.01.02 «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով՝ 4,734,678.1 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով)

4.734.678.1 դրամ

• 08.03.01.11 «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության շենք-շինությունների հիմնանորոգում» ծրագրով՝ 200,000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով)

• 08.03.01.13 «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության տեխնիկական վերակինում» ծրագրով՝ 129,860.3 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով)

Բացի դրանից՝ ՀՀ կառավարության 2016թ. մարտի 10-ի N215-Ն որոշմամբ՝ ավելացված արժեքի հարկի վճարման գծով առաջացած պարտավորությունների կատարման նպատակով Հանրային հեռուստաընկերությանը 11.01.01.01 «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» ծրագրով հատկացվել է 132,601.9 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածով):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2016թ. Հանրային հեռուստաընկերության ստացած եկամուտները՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների.

ԱՂՅՈՒՍԱԿ 2-Ի՝ «ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ» ՏՈՂՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԵՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՇՎԻՆ ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍՏԱՑՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

2016Թ. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԵՎ ԱՅԼ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ՈՒՂՂԵԼ Է ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ

ԱՂՅՈՒՍԱԿ 2

2016Թ. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՏԱՑԱԾ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ՝ ԸՍՏ ՍՏԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

ԵԿԱՄՏԻ ՏԵՍԱԿ	ԳՈՒՄԱՐ (ՀԱՋ. ԴՐԱՄ)
1 ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	4 867 280
1.1 «ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԾՐԱԳՐՈՎ	4 734 678
1.2 «ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ» ԾՐԱԳՐՈՎ	132 602
2 ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ	734 116
3 ԱՅԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻՑ ԵԿԱՄՈՒՏ	3 727
4 ԱՌԱՏՐԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝	568 303
4.1 ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՎԱԶԴԻՑ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՁՈՒԹՅՈՒՆԻՑ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱԼԻՔԻ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԳՈՎԱԶԴԻՑ ԵԿԱՄՈՒՏ	321 153
4.2 ՖԻԼՄԵՐԻ և ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԻՑ ԵԿԱՄՈՒՏ	196 861
4.3 ՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԻՑ և ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿՈՒՄԻՑ ԵԿԱՄՈՒՏ	21 224
4.4 ԱՅԼ ԱՌԱՏՐԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏ	29 065
5 ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ	26 689
ԸՆԴԱՄԵՆԸ	**6 200 115**

ԱՂՅՈՒՍԱԿ 3-ՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ 2016Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ԾԱԽՍԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԱՂՅՈՒՍԱԿ 3

2016Թ. ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԱԾ ԾԱԽՍԵՐԸ՝ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԾԱԽՍԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԳՈՒՄԱՐ (ՀԱՋ. ԴՐԱՄ)
1 ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ, ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐ և ԱՅԼ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	1 596 700
2 ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ, ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ և ՖԻԼՄԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾԱԽՍԵՐ	2 511 686
3 ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԾԱԽՍԵՐ	427 960
4 ՄԱՇՎԱԾՔ և ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ	976 042
5 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	581 683
ԸՆԴԱՄԵՆԸ	**6 094 071**

Աշխատավարձերի, հավելավճարների և այլ վարձատրությունների գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 26.2%-ը և ներառել են հաստիքային աշխատողների աշխատանքի վարձատրության, ինչպես նաև՝ մարզային և արտերկրի թղթակիցների վարձատրության ծախսերը:

Հեռուստահաղորդումների արտադրության, հեռուստահաղորդումների և ֆիլմերի հեռարձակման իրավունքի ձեռքբերման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 41.2%-ը և ներառել են հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների, ֆիլմերի և տարբեր նշանակալի սպորտային ու մշակութային միջոցառումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, ինչպես նաև հաղորդումների ստեղծագործական խմբերի և կրկնօրինակման ծառայությունների վարձատրության ծախսերը:

Հեռարձակման ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 7.0%-ը և ներառել են թվային ու անալոգային, ինչպես նաև արբանյակային ու առցանց ինտերնետային կապուղիներով հեռարձակման ծախսերը:

Մաշվածքի և ամորտիզացիայի գծով ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 16.0%-ը և ներառել են Ընկերության շենքերի ու շինությունների, ինչպես նաև այլ հիմնական միջոցների և արտադրական նշանակության ծրագրային միջոցների ամորտիզացիայի ծախսերը:

Այլ ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 9.5%-ը և ներառել են գրասենյակային ապրանքների և նյութերի, արտադրական նյութերի և պահեստամասերի ձեռքբերման, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության, տնտեսական և ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման, տրանսպորտային միջոցների շահագործման, շենքերի և շինությունների պահպանման, կապի և կոմունալ ծառայությունների ձեռքբերման, ներկայացուցչական, աուդիտի, գործուղման ծախսերը, հարկերը և տուրքերը (ներառյալ շահութահարկի գծով ծախսը և հետաձգված հարկերի գծով փոխհատուցումը), ինչպես նաև՝ զուտ ֆինանսական ծախսերը:

2016թ. ֆինանսատնտեսական գործունեության արդյունքում ստացված զուտ շահույթը կազմել է 106,044.0 հազ. դրամ:

2016թ. գործունեության ընթացքում Հանրային հեռուստաընկերությունը հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով ՀՀ պետական բյուջե է վճարել 745,637.6 հազ. դրամ:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հոկտեմբերի 24-ի N 1128-Ա որոշմամբ Երևանի քաղաքային համայնքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Գ. Հովսեփյան 80 հասցեում գտնվող 1.4 հեկտար մակերեսով հողամասը՝ 225,000.0 հազ. դրամ գնահատված շուկայական արժեքով, 2016թ. ներդրվել է Հանրային հեռուստաընկերության կանոնադրական կապիտալում:

2016թ. Հանրային հեռուստաընկերությունը ձեռք է բերել 414,817.3 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժողությամբ տեխնիկական սարքավորումներ և արտադրատնտեսական գույք, մասնավորապես հեռուստատեսային և համակարգչային տեխնիկա, արտատաղավարային նկարա-

հանումների համար նախատեսված տրանսպորտային միջոց, տաղավարների ձևավորման դեկորացիաներ, օդորակման և օդակարգավորման համակարգեր, հեռուստատեսային տեխնիկայի ծրագրային լիցենզիաներ, ինտերնետային կայքի տեխնիկական արդիականացման ծառայություններ, գրասենյակային կահույք, տնտեսական գույք և այլն, որից 129,860.3 հազ. դրամը ֆինանսավորվել է 2016թ. ՀՀ պետական բյուջեից տեխնիկական վերազինման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցների հաշվին, իսկ 284,957.0 հազ. դրամը՝ 2016թ. ներգրավված հավելյալ եկամուտների հաշվին:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հոկտեմբերի 13-ի N 1051-Ա որոշմամբ Հանրային հեռուստաընկերությանը սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կողմից տրամադրված 2,509,759.1 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ հեռուստատեսային տեխնիկա:

Եվրոպական հեռարձակողների միության կողմից վերջինիս անդամակցության շրջանակներում Հանրային հեռուստաընկերությանը անհատույց տրամադրվել է 7,016.5 հազ. դրամ ընդհանուր արժողությամբ հեռուստատեսային տեխնիկա:

Շենքերի և շինությունների հիմնանորոգման նպատակով 2016թ. Հանրային հեռուստաընկերությունն իրականացրել է 388,719.3 հազ. դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր արժեքով շինարարական աշխատանքներ (գլխավոր մասնաշենքի չվերանորոգված հատվածների նորոգման աշխատանքներ, գլխավոր մասնաշենքի արտաքին սանդուղքների կապիտալ շինարարական աշխատանքներ, «Երևան ստուդիա» մասնաշենքի վթարային հատվածի քանդման, կից եռահարկ աստիճանավանդակի կառուցման և չվերանորոգված հատվածների ընթացիկ նորոգման աշխատանքներ, գլխավոր մասնաշենքի տանիքի վերակառուցման աշխատանքներ և այլն): Դրանից 200,000.0 հազ. դրամը ծախսվել է ՀՀ պետական բյուջեից շենք-շինությունների հիմնանորոգման նպատակով ստացված կապիտալ դրամաշնորհի միջոցների հաշվին, իսկ 188,719.3 հազ. դրամը՝ 2016թ. ներգրավված հավելյալ եկամուտների հաշվին:

Տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման գործընթացը շարունակական բնույթ է կրում: Յուրաքանչյուր տարի Հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է իրականացնել տեխնիկական վերազինման և կապիտալ նորոգման աշխատանքներ՝ հաշվի առնելով վերոհիշյալ ուղղություններով նախատեսվող ֆինանսական միջոցներն ու առաջնահերթությունները:

WWW.1TV.AM